ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար բազկաթոռների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/41» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի նոյեմբերի 30-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/41-1» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2023 թվականի դեկտեմբերի 14-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխությունների առաջացման պատճառ՝

Անհրաժեշտություն է առաջացել, պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմանները, Պայմանագրով նախատեսված 60 հատ ղեկավարի բազկաթոռներից 2 հատ ղեկավարի բազկաթոռները փոխարինել 1 հատ այլ բնութագիր ունեցող ղեկավարի բազկաթոռով, որի նպատակով նախատեսվել են 195 000 (մեկ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցներ:

Փոփոխությունների նկարագրություն՝

1. Պայմանագրի 3.1 կետում 6 360 000 (վեց միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ բառերը փոխարինվել են 6 343 000 (վեց միլիոն երեք հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ բառերով,
2. Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» վերտառությամբ Հավելված N 1-ը փոփոխվել է,
3. Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը փոփոխվել է,
4. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը փոփոխվել է:

Փոփոխությունների հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 կետ:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
30.11.2023Թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/41-1» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «14» դեկտեմբերի 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և Լեվան ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Պետրոսյանի (այսուհետ՝ Վաճառող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմանները և հիմք ընդունելով 30.11.2023թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/41-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրով նախատեսված 60 հատ ղեկավարի բազկաթոռներից 2 հատ ղեկավարի բազկաթոռները 1 հատ այլ բնութագիր ունեցող ղեկավարի բազկաթոռով փոխարինման անհրաժեշտությունը ու այդ նպատակով 195 000 (մեկ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով նախատեսված ֆինանսական միջոցները, ինչպես նաև վերոնշյալ փոփոխությամբ պայմանավորված Պայմանագրի ընդհանուր գնի վերանայման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի 3.1 կետում 6 360 000 (վեց միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ բառերը փոխարինել 6 343 000 (վեց միլիոն երեք հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ բառերով,

1.2. Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» վերտառությամբ Հավելված N 1-ը փոփոխել՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի,

1.3. Պայմանագրի «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 2-ը փոփոխել՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի,

1.4. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 3-ը փոփոխել՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 3-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 5 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1, N 2, N 3 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Դատական դեպարտամենտ	***Լեվան ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ Արմավիրի մարզ, Փարաքար, Մեքենագործների փողոց 1-ին շենք բն.8
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 04726413
Հ/Հ՝ 900011005841	Հ/Հ՝ 2470600793880000
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	Տնօրեն՝ Ա. Պետրոսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 14 » դեկտեմբերի 2023թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 1
« 30 » « 11 » 2023թ. կնքված
N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/41-1» ծածկագրով պայմանագրի)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ապրանքի			
h/h	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	39111220/3	Բազկաթոռ՝ ղեկավարի	Ղեկավարի բազկաթոռ՝ հինգ անվակների վրա՝ միմյանց կապակցված հինգ թևանի խաչուկով, երեսպատած բնական փայտով: Նստատեղը և թիկնակը՝ փափուկ՝ 6սմ սպունգի հաստությամբ: Կողային հենակները՝ բնական փայտ: Թիկնակը՝ կարգավորվող, նստատեղը՝ բարձրացնելու և իջեցնելու հնարավորությամբ: Թիկնակը և նստատեղը՝ պատրաստված մեկ ամբողջական նրբատախտակից: Նստատեղի լայնքը՝ 50սմ, խորությունը՝ 47սմ: Բազկաթոռի բարձրությունը՝ գետնից մինչև թիկնակի վերին հատվածը (բարձրացված վիճակում) 120սմ: Պաստառապատված բնական կաշվով: Գույնը՝ սև: Չափսերի թույլատրելի շեղումը՝ +, - 2%: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը և հավաքումը (ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը) իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին՝ նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 1 տարի: Ապրանքների արտաքին տեսքը նախապես պետք է համաձայնեցնել Գնորդի հետ:

2	39111220/6	Բազկաթոռ՝ ղեկավարի	Ղեկավարի կաշվե բազկաթոռ՝ արմնկակալները փայտե՝ կաշվի համադրմամբ, խաչուկը փայտից, ճոճման մեխանիզմ՝ մի քանի դիրքում ֆիքսելու հնարավորությամբ: Բազկաթոռի ընդհանուր բարձրությունը՝ առնվազն 1225մմ, արմնկակալների բարձրությունը՝ առնվազն 215մմ, նստատեղի բարձրությունը՝ 475մմ, նստատեղի խորությունը՝ 540մմ, նստատեղի լայնությունը՝ 520մմ, ծանրաբեռնվածությունը՝ մինչև 200կգ: Գույնը՝ սև: Չափսերի թույլատրելի շեղումը՝ +, - 2%: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը, բեռնաթափումը և հավաքումը (ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը) իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին: Ապրանքի համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Դատական դեպարտամենտի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 1 տարի: Ապրանքի արտաքին տեսքը ըստ նկարի՝

ԳՆՈՐԴ

Դատական դեպարտամենտ

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011005841

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

Լևոն ՍՊԸ

Հասցե՝ Արմավիրի մարզ, Փարաքար, Մեքենագործների փողոց 1-ին շենք բն.8

ՀՎՀՀ՝ 04726413

Հ/Հ՝ 2470600793880000

«Արդշինբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Մ. Մելքումյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 2
« 14 » դեկտեմբերի 2023թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
« 30 » « 11 » 2023թ. կնքված
N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/41-1» ծածկագրով պայմանագրի)

ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի							
հ/հ	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
					հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
1	հատ	106 000	6 148 000	58	ք. Երևան, Վ. Սարգսյան 5, Թբիլիսյան խճ. 3/9	58	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր:
2	հատ	195 000	195 000	1	ք. Երևան, Թբիլիսյան խճ. 3/9	1	Համաձայնագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 19-ը:

Համաձայնագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
Լեվան ՍՊԸ
Հասցե՝ Արմավիրի մարզ, Փարաքար,
Մեքենագործների փողոց 1-ին շենք բն.8
ՀՎՀՀ՝ 04726413
Հ/Հ՝ 2470600793880000
«Արդշինբանկ» ՓԲԸ

Տնօրեն Վ. Պետրոսյան

/ստորագրություն/

Հավելված N 3
« 14 » դեկտեմբերի 2023թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 3
« 30 » « 11 » 2023թ. կնքված
N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/41-1» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի				
հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին, այդ թվում՝	
			դեկտեմբեր	Ընդամենը
1	39111220/3	Բազկաթոռ՝ ղեկավարի	6 148 000	**6 148 000**
2	39111220/6	Բազկաթոռ՝ ղեկավարի	195 000	**195 000**

ԳՆՈՐԴ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
Լեվան ՍՊԸ
Հասցե՝ Արմավիրի մարզ, Փարաքար,
Մեքենագործների փողոց 1-ին շենք բն.8
ՀՎՀՀ՝ 04726413
Հ/Հ՝ 2470600793880000
«Արդշինբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Պետրոսյան

/ստորագրություն/
Կ.Տ.